




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

634

C-21

30 JUL 2010

634

Ե-24

Ս. Խ. Հ. ՀԱՂԺՈՂԿՈՄԱՏ

ԳՅՈՒՂԵՏՆՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 19 (110)

Մ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ
ԽՆԱՄՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1931

21.03.2014

15332

634

Ե-ԶԻ

Ն. մ.

ՆԱԽԱՆԵՂԱՓՈԽԱԿԱՆ շՐՋԱՆՈՒՄ ԱՅԳԻՆՆԵՐ ՔԻՉ ԿԱՆ

Նախաճեղափոխական շրջանում պտղաբուծությունը բավական հաջողությամբ զարգանում էր կալվածատիրական հողերում: Գյուղացիական տնտեսություններում, բացառիկ դեպքերում միայն տնկվում էին փոքրիկ պարտեզներ: Յեվ վերսկսվելու այդ պարտեզներն էլ տնկվում էին անկանոն և նրանց վերաբերմամբ չէր տարվում հարկը պահանջված խնամքը, ուստի գյուղացիությունն էլ նրանից մեծ յեկամուտ չէր ստանում:

Գյուղացիական տնտեսություններում պտղաբուծության թույլ զարգացման և նվազ յեկամտաբերության պատճառներն նախ՝ սակավահողությունն էր, յերկրորդ՝ գյուղացիությունը հանուր յետամնացությունն ու աղքատությունը և յերրորդ՝ վոր ազգաբնակչությունը միայնակալ տնտեսություններ կանոնավոր ծառատրվման և նրա խնամքին: Այդ պատճառները

Հրատ. № 1518

Նրատեղ. № 6144 (բ). Գառվեր № 769. Տերտեղ. Գ. Գ. Գ. Գ.
Հայկաճերտեղ. ազգաբն. Յերտեղաճ

1463

14392-25-26361



վերացման մասին այն ժամանակ շատ քչերն
էին մտածում: Կալվածատերերի համար էլ,
ընդհակառակը, ձեռնտու յեր գյուղացիական
տնտեսութիւնների թույլ զարգացումը:

ՊՏՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆԸ ԶԱՐԿ ՏԱԼՈՒ ՀԱՍԱՐ ԻՆՉ Ե ԱՐՎՈՒՄ ԱՅՍՈՐ

Խորհրդային իշխանութիւնը խորապէս շա-
հազրգուլած ե գյուղատնտեսութեան բարձրաց-
ման խնդրով: Այն բոլոր միջոցները, վորոնք
այսպէս թե այնպէս կարող են նպաստել նրա
զարգացմանն ու բարելավմանը, — ձեռնարկվում
են այժմ: Այդ ձեռնարկումների շարքում կառա-
վարութիւնն իրեն նպատակ ե դրել զարկ տալ
նաե պտղաբուծութեան զարգացմանը:

Այդ իսկ նպատակով ել այժմ խոշոր չափե-
րով ընդարձակվում են պտղատու ծառերի տըն-
կարանները, վորպեսզի խորհտնտեսութիւննե-
րին, կոտնտեսութիւններին և անհատական
տնտեսութիւններին տնկիներ մատակարարվեն:
Հնգամյակի վերջին տնկարանների տարածու-
թիւնը Հայաստանում պիտի հասնի 250 հեկտ-
է պիտի տարեկան մատակարարվի մոտավորա-
պէս 3 և կես միլիոն տնկի: Գյուղատնտեսական
բանկի կողմից վարկեր են տրամադրվում խորհ-
տնտեսութիւններին, կոտնտեսութիւններին,

չքաղոր-միջակ տնտեսութիւններին պտղատու
այգիներ գցելու, նրանց վերաբերմամբ կուլտու-
րական խնամք տանելու և մրգերը կոո-
պերատիվ հիմունքներով վաճառահանելու հա-
մար: Պտղաբուծական գիտելիքները մասնաշա-
կանացնելու համար կազմակերպվում են կար-
ձատե դասընթացներ և գրույցներ: Շրջմիու-
թիւններն և շողորզաններն ունեն գյուղատըն-
տեսներ և հրահանգիչներ, վորոնց ամեն վոք
կարող ե դիմել՝ խորհուրդներ և ցուցումներ
ստանալու համար: Բաւի դրանից, այժմ գյու-
ղատնտեսական պարբերական հրատարակու-
թիւններն ու հրատարակչութիւնները ոգնու-
թեան են հասնում գյուղացիութեան, վորպեսզի
նա արագ կերպով կարողանա բարձրացնել ու
բարելավել իր տնտեսութիւնը: Այդ նպատակով
գյուղատնտեսութեան բոլոր ճյուղերի վերաբե-
րյալ հրատարակվում են եժանադին գրքույկ-
ներ: Մեկը այդպիսիներից — հանգիստանում ե
ներկա գրքույկը:

Մեր նպատակն ե — գյուղացուն ծանոթաց-
նել պտղատու այգեգործութեան գլխավոր կա-
նոնների հետ:

ՊՏՆԱՍՈՒ ԱՅԳՈՒ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Փոքրիկ պարտեզներ կարելի յե տնկել տ-
մեն տեղ: Սակայն մեծ, արդյունաբերական նը-

պատակներ հետապնդող այգու համար տեղի ընտրության խնդիրը խոշոր նշանակութիւն ունի: Պտղատու այգու համար ամենալավ տեղը՝ հարթ տարածութիւնն է, իսկ ավելի լավ՝ քիչ դեպի հարավ և հարավ-արևմուտք դարձած վայրերը: Մոնավ, ինչպես նաև չափազանց բարձր տեղերը՝ պտղատու այգու համար անպետք են: Յաճրադիր տեղերում պտղատու ծառերի արմատները փտում են և ծառերը թույլ են զարգանում: Բարձրադիր, չոր տեղերում ծառերը տուժում են մթնոլորտային տեղումների սակավութիւնից, վորի հետևանքով պտղի մայան հաճախ թափվում, և ծառերը քիչ բերք են տալիս:

Պտղատու այգու համար, բացի տեղի ընտրութիւնից, խոշոր նշանակութիւն ունի նաև հողը և ներքնահողը: Պտղատու այգու համար ամենալավ հողը համարվում է կավախառն սևահողը՝ ավազա-կավային ներքնադերով: Ավազահողերն ու մոխրահողերը պտղաբուծութան համար այնքան էլ պետքական չեն:

ԱՅԳՈՒ ՇՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ինչքան էլ լավ հող լինի, այնուամենայնիւ, նախքան նրա վրա ծառեր տնկելը անհրաժեշտ է այն նախապատրաստել: Այգուն հատկացրած հողը ամենից առաջ պետք է լավ պարարտաց-

նել և խորը վարել (25 սանտիմ.): Լավ է, յեթե ալգուն հատկացրած հողամասը միջանի տարի շարունակ բանջարանոց յեղած լինի, վորովհետև բանջարանոցային բույսերը պահանջում են լավ պարարտացում և խորը մշակված հող: Ավազոտ հողերը բարելավելու համար ավելացնում են կափ, իսկ պարարտացման համար ավելի լավ և գործադրել կովի աղբ: Չափազանց կավային հողը բարելավում են փաած տերևներ և մոխիր խառնելով: Յաճր տեղերում՝ ճահճացումից ապահովելու համար՝ անհրաժեշտ է առուններ անցկացնել:

Բացի տեղի և հողի ընտրութիւնից անհրաժեշտ է լուրջ կերպով մտածել, թե ի՞նչ փոփոխակների ծառեր պիտի տնկել: Ո՛ր հայտնի չէ, վոր մեր գյուղացին յերբեք այս հարցով չի հետաքրքրվել: Փոփոխակներն ըստ իրենց հատուկանալու ժամանակաշրջանի լինում են՝ ձմռան, ամռան և աշնան: Այդ տեսակներից յորտքանչուրն ունի իր բազմաթիւ փոփոխակները, վորոնք միմիանցից տարբերվում են իրենց բերքաավությամբ, արմատով, խոշորությամբ, գույնով, դիմացկունությամբ և այլն: Դրա համար վնչ միայն կարևոր է վորոշել, թե ձմռան, ամռան և աշնանային տեսակներից ի՞նչ քանակությամբ ծառ պիտի տնկել, ալև ավելի կարևոր

ե փորոշել, թե իսկապես, փոր տեսակն ե ավելի հարմար տվյալ այգում տնկելու համար:

Գրքույկի վերջում, փորպես հավելված, մենք տալիս ենք պտղատու ծառերի փոփոխակներն, ըստ շրջանների, փորը փորոշել ե Հողօդկոմատի մասնագետների խորհրդակցությունը: Այդ նույն հանձնաժողովը յուրաքանչյուր շրջանի համար սահմանել ե նաև յուրաքանչյուր փոփոխակի տոկոսը: Սա նշանակում փորոշել, թե յուրաքանչյուր տեսակից քանի՞ ծառ պիտի տնկել տվյալ շրջանի այգում: Դրա մասին ել ե հիշված հավելվածում: Սակայն լավ կլինի, պտղաբուծության տրվելիք ուղղություն ե պտղատու ծառերի տեսակների մասին ղեկավարվել շրջանային գյուղատնտեսի ցուցմունքներով:

ՓՈՍԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՆ ՌԻ ՏՆԿԵԼԸ

Ծառերի կանոնավոր տնկելը՝ ապագա այգու համար խոշոր նշանակություն ունի: Ուստի դրա վրա պիտի լուրջ ուշադրություն դարձնել: Պտղատու ծառերը ընդարձակ տարածություն են պահանջում, ուստի դրանք չպիտի խիտ տրնկվեն: Այսպես՝ խնձորենին պիտի տնկել միմի անցից 7—9 մետր հեռավորությամբ, տանձը 5—7 մետր, սալորն ու պալը՝ 4.5—5.8 մետր, դեղձը՝ 4—5 մետր, ծիրանը՝ 8—9 մետր: Այս-

պիսով, մի հեկտար տարածության վրա պիտի տնկել 170 հատ խնձոր, 238 հատ տանձ, 320 հատ սալոր, 150 հատ ծիրան, 400 հատ դեղձ: Լավ կլինի տնկիները դասավորել շախմատի ձևով, փորպեսզի յուրաքանչյուր ծառ մյուս բոլոր հարևան ծառերից գտնվի հավասար հեռավորության վրա: Շախմատի ձևով դասավորելու համար անհրաժեշտ ե մի հավասարակողմ յեռանկյունի պատրաստել, փորի ոգնությունը հեշտ ե տնկիների տեղի փորոշել: Տնկիներ կտրելի յե տնկել ինչպես աշնանը նույնպես ե գարնանը: Աշնանը պիտի տնկել այն ժամանակ, յեթե ծառի աճումը դադարում ե ե տերևներն սկսում են թափվել, իսկ գարնանն ել պիտի տնկել, մինչև բողբոջներ տալը:

Ի՞նչ լայնությամբ ու խորությամբ պիտի փորել փոսերը.—Փոսեր կտրելի յե փորել տարբեր լայնությամբ, սակայն այդ լայնությունը մեկ ե կես մետրից պակաս չպիտի լինի, իսկ խորությունը մինչև $\frac{3}{4}$ մետր: Փոսեր փորելիս պիտի պահպանել հետևյալ կանոնները.—Փոսից հանված հողը յերկու կիսուկ ե արվում. մի կողմում կիտվում ե վերին շերտի հողը, մյուս կողմում՝ ներքնաշերտի հողը: Փոսերը պիտի պատրաստել նախորդը: Այդ դեպքում նախ փոսերը կհողմնահարվեն ե ապա նրանցից դուրս

սոված հողը կփութարանա: Ծառերը տնկվում են հետեւյալ կերպ. — Տնկելուց մի քանի որ առաջ, փոսի հատակը, լեթե այն պատրաստված է նախորդ, մի շերտ փութը հող են լցնում, փորին խառնում են նաև փտած գոմաղը և խառնաղը: Արմատները տակը թարմ գոմաղը չպիտի լցնել՝ դրանից կարող են արմատները փաել: Տնկելուց առաջ տնկին ուշադրութեամբ պիտի նայել և սուր դանակով կտրել բոլոր ջարդված ճյուղերն ու փչացած արմատները: Յեթե տնկինները բերված են հեռու տեղից և թառամած են, լավ կլինի տնկելուց առաջ մի քանի ժամ ջրի մեջ դնել: Տնկելուց առաջ ծառի արմատները պիտի թրջել կավի լուծույթով, փորպեսզի հետո հողը լավ կպչի նրանց: Մինչև տնկելը, փոսի մեջ տեղում մի ձող են տնկում և նրանից դեպի հյուսիս, 6 սանտիմ. դասավորութեան վրա արնկում են ծառը: Ավելի լավ է ծառը տնկել յերկու հոգով: Մեկը ծառը դնելով փոսի մեջ պահում է այնպես, վոր նրա արմատավզիկը փոսի բերանից բարձր լինի 8 սանտիմ., իսկ մյուսը՝ արմատներն ուղղելով փոսի մեջ — հողը լցնում է նրանց վրա: Արմատների վրա լցնում են վերնաշերտի հողը, նրան խառնելով փտած գոմաղը և խառնաղը: Յերբ արմատները ծածկվում են, ապա հողը փոքրով թեթև կերպով կոխ են տալիս

և սկսում են փոսը լցնել ներքնաշերտի հողով ու նրան տալիս բլրակի ձև: Ծառի բնի շուրջը ափսեյածն փոս են բանում ջրելու համար:

Տնկելուց հետո, մանավանդ դարնանը, ծառերը լավ ջրում են, և ջրած տեղի վրա փութը հող լցնում, փորպեսզի շուրը շատ չգոլորշիանա: Յերբ հողը վերջնականապես կնստի, ծառն ել կիջնի իր իսկական տեղը: Յեթե ծառը տնկենք այն խորութեան վրա, ինչպես նա նստած է, յերկել է տնկարանում, ապա հողը նստելուց հետո, նա արդեն տնկված կլինի շատ խորը: Խորը տնկելը, նույնիսկ 8 սանտիմ. չափ, խիստ կերպով վնասում է ծառին: Այդ իսկ պատճառով դյուղացիական շատ տնտեսութուններում ծառերը կամ փչանում են, կամ թույլ դարձանալով՝ բերք չեն տալիս: Դրա համար ել ավելի լավ է ծառերը խոր չտնկել: Տնկված ծառերը կապում են ցցերից, սակայն կապում են այնպես, վոր կապը ծառին չխանգարի, յերբ նա իջնում է հողի հետ միասին: Ցցերը պիտի արնկել ծառի հարավային կողմից, փորպեսզի նա ծառին պատշաճի ուժեղ արևահարումից: Ցիցը ծառի վերի ճյուղերից 8 սանտիմ. քաժը պիտի լինի, փորպեսզի քամու ժամանակ նրանք ցցին չքավեն:

ՄԱՏԱՆ ԱՅԳՈՒ ԽՆԱՄՔԸ

Առաջին տարիները, լերը դեռ ծառերը չեն փաթաճացել, այգու հողում կարելի չէ կարտոֆիլ անկել կամ բանջարանոց անել: Այդ գեպում այգու հողը պիտի մշակել այնպես, վոր ծառերի արմատները չփխսվեն և ճյուղերը չկտրտվեն: Դրա համար գուլթանը ծառերին շատ մոտ չպիտի քշել, այլ ծառի բնի շուրջը բահով փորել: Հողը չորանալուց պաշտպանելու համար լավ է բնի շուրջը ծածկել գոմաղբով. բնի վրա գոմաղբ չպիտի լցնել: Մուխոտները պիտի քաղհանել և վոչ մի կերպ թույլ չտալ, վոր նրանք զարգանան:

Յեթե այգու հողը չոր է, և անձրև քիչ է գալիս, ժամանակ առ ժամանակ պիտի ջրել: Այգին հաճախ չպիտի ջրել, սակայն ջրելիս ջուր պիտի տալ խիստ առատութեամբ, վորպեսզի նա մինչև արմատները ծծվի: Վոռոգող ջուրը պիտի սառը չլինի, դրա համար ավելի լավ է ջրել գետի ջրով: Իսկ յեթե հողը ուժասպառ է, ապա լավ ջրել խմորման շրջանն անցած աղբանյութով: Նոր պատրաստած աղբահյութ գործադրել չի կարելի:

Ամեն տարի աշնանը կամ վաղ գարնանը ծառերը պիտի ետել: Մառի ճյուղերը պիտի

ետել սուր դանակով, այգու մկրատով, սղոցով:

Շտելիս պիտի հեռացնել բոլոր չորացած ճյուղերը և շիվերը նույնպես և այն ճյուղերը, վորոնք խաչմերվում են միմիանց հետ և խեղդում են սաղարթը. կարճացվող ճյուղերը պիտի կտրել սուր դանակով, վարից-վեր՝ քիչ թեքութեամբ այնպես, վոր կտրվածի տակ մնա դուրս նայող աչք, վորը ճյուղը շարունակելու համար նոր ընձյուղներ է տալու:

Մատաղ ծառի կեղևներին մեծ մնաս են պատճառում մկներն ու նապաստակները, դրա համար ել ձմեռը, այդ ծառերը պիտի փաթաթել յեղևնու ճյուղերով, յեղեգնով կամ վորևե փշատերև ծառի ճյուղերով:

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ԱՅԳՈՒ ԽՆԱՄՔԸ

Հասունացած և հին ծառերը, ինչպես ջանել ծառերը, նույնպես մշտական խնամք են պահանջում: Իսկ յեթե վորևե պատճառով այդ խնամքը նրանց վերաբերմամբ չի տարվում, կամ տարվում է անբավարար, ավելին՝ անշնորհք ու անփութ կերպով, — այս ծառերը հիվանդանում են, քիչ բերք են տալիս, և ժամանակից շուտ չորանում են: Ահա, թե ինչու յուրաքանչյուր կոլանտեսական, յեթե ցանկանում է իր այգուց յեկամուտ ստանալ, պիտի շարունակ հագ տա-

նի, վոր իր ծառերը լինեն առողջ և ազատ՝ զանազան հիվանդությունների և վնասատուների պատճառած վնասներից: Դրա համար միշտ ժամանակին ու կանոնավոր կերպով պիտի կատարել այգու աշխատանքները: Այգու աշխատանքը չի սահմանափակվում վորոշ ժամանակով, նա շարունակվում է ամբողջ տարին:

Տեսնենք ինչ աշխատանք ու խնամք է պահանջում հասունացած այգին՝ ըստ տարվա յեղանակների:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՅԳՈՒՄ

Թեև այգու աշխատանքը շարունակվում է տարին բոլոր, սակայն այդ աշխատանքներից ամենակարևորներն ու գլխավորները կատարվում են գարնանը: Այդ աշխատանքները հետաձգել չի կարելի, և յուրաքանչյուր աշխատանք պիտի կատարել իր ժամանակին: Ուշացրած աշխատանքը վոչ միայն նպատակին չի ծառայում, այլև հաճախ վնասում է այգուն, որինակ վոչ իր ժամանակին ետելը:

Այդ աշխատանքները հետևյալներն են.

Կեղևվր ւափելը. — ծառի հետ կեղևը տաքեց-տարի մեռնում է, ճաքճքում և դառնում է անհարթ, խորդուբորդ և նրա տակնոր լեկած կեղևի ազդեցությամբ վորպես կճեպ չորանում է:

Ահա այդ հին կեղևը և զանազան վնասատուների համար հանդիսանում է ձմեռային թագըստարան: Վորպեսզի վնասատուներին զրկենք իրանց այդ թագստարանից, իսկ ջահել կեղևին՝ զարգանալու հնարավորություն տանք — անհրաժեշտ է ամեն տարի ծառի կեղևը մաքրել:

Կեղևի մաքրելու աշխատանքը կատարում են կամ աշնանը կամ վաղ գարնանը, խոնավ, ամպամած օրերին, յերբ հին կեղևը հեշտությամբ է պոկվում: Դրա համար կան հատուկ քերիչներ և խոզանակներ, սակայն այդ աշխատանքը կարելի չէ կատարել նաև ուրիշ հասարակ գործիքներով — փայտե շեղբիկներով և այլն:

Հին կեղևը մաքրելիս պիտի աշխատել չվնասել ջահել, կանաչ կեղևը: Կեղևը մաքրելուց հետո, մաքրածը պիտի անպայման հավաքել ու այրել, վորովհետև նրանց մեջ լինում են ամեն տեսակի վնասատու միջատներ, ինչպես և ծաղկակեր բզեզներ, մեր այգիների ամենավտանգավոր թշնամին, վորը ձմեռը թափնվում է հին կեղևի ճեղքվածքներում:

Ծառերի մածուցումը. — Հին կեղևից մաքրած բնին ու հաստ ճյուղերին անհրաժեշտ է թարմ հանգցրած կրի շաղախ քսել: Այդ շաղախը պատրաստում են մածուխի թանձրությամբ: Շաղախը քսում են ճլուպից պատրաստած և յեր-

կար ձողի ծայրին ամրացրած վրձինով, վոր-
պեսդի կարելի լինի քսել վոչ միայն բուռը, այլև
բարձր ճյուղերը, վորոնց կեղևը նույնպես
մաքրված է։ Մատաղ, կանաչ կեղևներին այդ
շաղախը չպիտի քսել, վորովհետև նրանց կարող
է վնասել։ Կրի շաղախ քսելն այն ոգուտն ունի,
վոր նա վոչնչացնում, սպանում է կեղևի ճեղ-
քերում գտնված ամեն տեսակի վնասատուների
ձուերը։ Բացի այդ, նա ծառի բուռը պաշտպա-
նում է արևի ուժեղ տաքացնելուց, վորը հաճախ
վնասում է ծառին։

Ծառերի ետելը. — Յեթե մատաղ պտղատու
ծառերը ետելու կարիք են դգում, ապա առա-
վել ևս դրա կարիք դգում են հասունացած ծա-
ռերը։ Ծառերը ետել կարելի յե ինչպես աշնանը,
նույնպես և վաղ գարնանը, ամենից առաջ պի-
տի կտրել, հեռացնել չոր ճյուղերը։ Կանաչ ճյու-
ղերից ել պիտի կտրել սաղարթը խտացնող թույլ
և ծուռ շիվերը։ Ըստ վորում, պիտի աշխատել
պահել այն ճյուղերը, վորոնց վրա շատ պտուղ
կա և վորոնք գտնվում են սաղարթի դրսի կողմը։
Վնասված ճյուղերը կտրում են մինչև առողջ
տեղը, յեթե այդ առողջ մասերը հարկավոր են
սաղարթը լրացնելու համար։ Հակառակ դեպքում
հեռացնում են ամբողջությամբ։ Յերբեմն պտղա-
տու ծառերի վրա, մանավանդ հասունացած ծա-

ռերի վրա աճում են հոռաշիվեր, վորոնք հաճախ
ուղղված են լինում դեպի վեր։ Այդ հոռաշիվերը
բանում են հիվանդ կամ վատ աճող սաղարթի
վրա։ Այդ դեպքերում ծառը ինքը ցանկանալով
ջահեղացնել, թարմացնել իր սաղարթը, հին, հի-
վանդ ճյուղերի փոխարեն տալիս է հոռաշիվեր,
վորոնց մի մասը պիտի թողնել հին, հիվանդ
ճյուղերին փոխարինելու և սաղարթի ազատ տե-
ղերը լրացնելու համար, իսկ մնացածները պիտի
հեռացնել։ Պիտի կտրել բնի մոտ յեղած ճյու-
ղերը, կտրած տեղը սուր զանակով հարթել և
վրան քսել այսպես ասած ալդու մածիկ կամ
յուղաներկ։ Իսկ յեթե այդ մածիկը դժվար լինի
ճարելը, ապա նրա փոխարեն կարելի յե գոր-
ծածել ավելի եժան նյութ, վորը պատրաստում
են հետևյալ կերպ։ Վերցնում են յերկու դույլ
կուլի թարմ ալդ և մի դույլ մաղած կիր և այդ
բոլորը խառնում են ջրի հետ մինչև մածուկի
թանձրության։ Մածիկը հարկավոր է հաստ ճյու-
ղերը կտրելու դեպքում, բարակ ճյուղերը կրա-
րելիս մածիկ հարկավոր չէ։ Կտրած բոլոր ճյու-
ղերն ու չորուկները, մինչև տաքերն ընկնելը,
պետք է հավաքել ու այգուց հեռացնել, վորով-
հետև հաճախ նրանց վրա պատուպարված են լի-
նում բազմաթիվ բուսական պարազիտներ և

ֆրասատունների ձուեր, վորոնք նորից կարող են
ընկնել ծառերի վրա:

Պայտաւ ւամուռի յեւ քոսի դեմ.— Հին, աչքա-
թող արած, ինչպես և նոր ալգիներում, վատ մշակ-
վելու, կանոնավոր չփորվելու, չպարարտագլելու
և առնասարակ խնամքի բացակայութեան հետե-
վանքով ծառերի ճյուղերը ծածկվում են մամու-
ռով և քոսով: Բուսական այս պարագիտներն
ապրում և սնվում են ծառի հաշվին, հյուծում
են նրան և ժամանակից թռաջ նրա չորանալու
պատճառ դառնում:

Բացի դրանից, մամուռն ու քոսը ալգու-
բազմատեսակ ֆրասատունների համար հանդիսա-
նում են ապահով ապաստարաններ, վորոնց մեջ
ձմեռը նրանք հավաքվում են և բարեհաջող ձմե-
ռում: Այդպիսի ալգիներից յեկամուտ ստանալու
մասին, ի հարկե, խոսք լինել չի կարող: Հյուծ-
ված ծառերը անկարող են պտուղ տալ, իսկ այ-
գում ապրող բազմաթիվ ֆրասատուները վոչնչաց-
նում, փչացնում են ամբողջ բերքը:

Հասկանալի չե, վոր յուրաքանչյուր, հոգա-
տար ու գիտակից գյուղացի չպիտի թողնի, վոր
իր ալգին ալդ դրութեանը հասնի:

Մամուռը և քոսը վոչնչացնելու համար,
ուշ աշնանը, տերեւթափի ժամանակ, կամ վաղ
գարնանը, մինչև բողբոջների լերկալը ծառերը

սրսկում են յերկաթե արջուսալի լուծութով (6
գրամը լուծելով մի դուլլըրի մեջ): Այս սրսկումը
ալրում ե մամուռն ու քոսը, վորից հետո նրանք
չորանում և թափվում են:

Թրքուռի բնեղի հաղափելը.— Շատ հաճախ
պտղատու ծառերի ճյուղերի, մանավանդ խնձո-
րենու ճյուղերի վրա ձմեռը մնում են կախ ընկած
տերեւներ և վոստայնի փնջեր: Դրանք մեզ մոտ շատ
տարածված ֆրասատու թրթուռների վոսկետուտ
մետաքսագործի, պլպելակի (Бояришница зла-
токуска) բներ են: Այդ թրթուռների թիթեռները
ամառվա կեսերին ձու յեն ածում պտղատու
ծառերի տերեւների վրա: Շուտով այդ ձվերից
դուրս են գալիս փոքրիկ թրթուռներ, վորոնք
կերակրվում են տերեւի փափուկ, նուրբ մասերով
և ձմեռելու համար բներ պատրաստում: Այդ
ֆրասատուների թրթուռները, վոստայնի ոգնու-
թեամբ կուչ են ածում տերեւները, իսկ ձմեռը
պատսպարվում են իրենց պատրաստած բներում:
Այդ դրութեամբ չնայելով աշնանային անձրեւե-
րին ու ձմեռվա սառնամանիքներին, նրանք հա-
ջողութեամբ ձմեռում են: Գարնան տաք յեղա-
նակներն սկսվելուն պես ալդ թրթուռները զարթ-
նում են և ագահութեամբ հարձակվում են մա-
տաղ տերեւների վրա: Այդ ֆրասատուները չա-
փազանց վտանգավոր են, և յեթե նրանց դեմ

միջոցներ չձեռնարկվեն, նրանք ամբողջովին կվոչնչացնեն ծառի տերևները և մայիսի վերջերին ամբողջ այգին կսևանա կմերկանա։ Նրանց դեմ պայքարելու ամենահեշտ և միևնույն ժամանակ արմատական միջոցը—այդ թրթուռների բները հավաքել—վոչնչացնելն է։ Թրթուռների բները կարելի չե հավաքել ուշ աշնանը, յերբ դեռ ծառերի վրա ձյուն չկա, և վաղ գարնանը—մարտին և ապրիլի սկզբներին, յերբ դեռ այդ թրթուռները չեն դարձնել և ձու չեն ածել։ Հավաքած տերևներն ու վոստայնի փնջերը անպայման պիտի այրել։

Հաճախ պտղատու ծառերի ճյուղերի վրա կարելի չե հանդիպել ձյութանման ողակների։ Դրանք ել մի ալ տեսակի, այսպես կոչված ողակավոր մետաքսագործ մնասատուի ձվեր են։ Գարնանը դրանցից նույնպես դուրս են գալիս անկշտում թրթուռներ։ Այդ ողակները նույնպես պիտի հավաքել և այրել։

Բնի ցածրի մասում, հողից վոչ բարձր և նույնիսկ արմատների ցանցերում կարելի է հանդիպել բրդապատ ձվերի կույտերի։ Դրանք ել մի ալ տեսակի մնասատուների՝ տարազուլդ մետաքսագործի բներ են։ Այդ մնասատուների դեմ պայքարում են ինչպես աշնանը, նույնպես և գարնանը—ձվիկները քերելով և արորելով, կամ

ձյութի և նավթի խառնուրդով (մի մաս ձյութ և յերկու մաս նավթ), վորից նրանք նույնպես վոչնչանում են։

Այգու հողի մեակումը.—Ինչպիսի միջոցներ ել, վոր մենք ձեռք առնելու լինենք պտղատու ծառերը պաշտպանելու բուսական պարագիտներից ու մնասատու միջոցներից—այնուամենայնիվ մենք մեր նպատակին հասած չենք լինի, յեթե այգու հողը կանոնավոր չմշակենք ու չպարարտացնենք։ Վոչ միայն ջահել ծառերի, ալ և հասունացած, սովերոտ ծառերի տակի հողը միշտ պիտի պահել փուխը դուրսից։ Դրա համար այգու հողը պիտի ամեն տարի հերկել, կամ առնվազը՝ ծառի բնի շուրջը փորել։

Ավելի լավ է այգու հողը հերկել աշնանը։ Աշնան հերկի շնորհիվ հողը ավելի լավ է սառչում և խոնավութիամբ հագեցնում։ Փխրացրած հողում մնասատու միջատները և մուխոտների սերմեր ավելի շատ են վոչնչանում։

Յեթե վորևե պատճառով աշնանը չի հաջողվել այգու հողը հերկել, ապա այն պիտի անել գարնանը, հենց վոր հողը տաքանա։ Վորջան շատ հողը հերկվի, այնքան նրա մեջ շատ խոնավություն կհավաքվի։ Հասունացած այգիներում, վորտեղ գութանով անկարելի չե հերկել, ծառերի բների շուրջը պիտի փորել բահով։

Ծառերի տակի հողը պիտի փորել այն չափով, վորքան տարածված են նրա ճյուղերը, հետևապես նաև արմատները: Պիտի հերկել և փորել խորը, վորպեսզի ողը, խոնավությունը և հողի սննդարար նյութերը կարողանան թափանցել ծառի արմատները: Յնթե այգու հողը հերկված ե աշնանը ապա գարնանը, հենց վոր հողը տաքանա, պիտի այն փոցխել, վորպեսզի հողը շուտ չորանալուց պաշտպանվի:

Ջահել այգիներում և նոսր անկված այգիներում, վորտեղ բավականաչափ լույս կա, կարտոֆիլ են տնկում և բանջարեղեններ ցանում ու արմատապտուղներ մշակում: Հասունացած և ստվերոտ այգիների հողում ավելի լավ ե վոչինչ չցանել, հողը վարել—պահել, և վորպեսզի խոտ չկանաչի, անհրաժեշտ ե գարնանը և ամառվա ընթացքում 3—4 անգամ փոցխել: Այգում հացահատիկներ և խոտաբույսեր չպիտի ցանել, վորովհետև դրանք հողը խիստ ուժասպառ են են անում և շատ խոնավություն կլանում:

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԱՄԱՐԱՐՏԱԳՈՒՄԸ. — Այնքան ժամանակ, վորքան այգում կատարվում ե կարտոֆիլի և բանջարեղենների ցանք, այգին պարարտացնելու կարիք չկա, վորովհետև վերոհիշյալ մշակութայիններին տրված պարարտանյութերը կծառայեն նաև ծառերին: Բայց վորովհետև,

կարճ ժամանակից այդ ցանքերն այլևս չեն արվում, կամ ձեռնառու չեն լինում, ուստի պողատու ծառերը պիտի պարարտացնել: Այգիների հողը ամեն տարի չպիտի պարարտացնել, այլ յերբ նկատվի, վոր նա ուժից ընկել ե արդեն, այսինքն, յերբ թուլանում ե ծառերի աճումը և պողատվությունը, ժամանակից առաջ դեղնում են տերևները և թափվում կոկոնները, պտուղները չեն ունենում իրենց համապատասխան մեծությունն ու գեղեցկությունը: Պարզ ե, վոր այդպիսի այգին պիտի պարարտացնել:

Վորպես պարարտանյութ պիտի ոգտագործել գոմաղբը, ազրանյութը, խառնաղբը, մոխիր և հանքային պարարտանյութերը:

Հանքային պարարտանյութերի մասին կխոսենք այլ գրքուկներում, այժմ կանգ առնենք մնացած պարարտանյութերի վրա:

Գոմաղբով պարարտացվում ե կամ այգու ամբողջ հողը՝ գարնանը կամ աշնանը հերկելու ժամանակ կամ՝ պարարտացնում են միայն բնի շուրջը փորելիս:

Գոմաղբը պիտի այնպես թաղել, վոր նա հողով լավ ծածկվի:

Ծառը պարարտանյութերը հողից ստանում ե ջահել արմատիկների թելիկների միջոցով: Հաստ արմատները ծառայում են ծառին հողի

մեջ աժուր պահելու համար և ծառին առջու
ջահել արմատիկների թելիկների միջոցով ստաց-
ված սննդանյութերը: Այդ արմատիկները ծառի
բնից գտնվում են այնքան հեռու, վորքան մատ-
ղաշ շիվերը, դրա համար ել գոմաղըր ծառի բը-
նին մոտ թողնելը միտք չունի:

Հասունացած պտղատու ծառերը պարար-
տացնում են հաս հետևյալ կերպ. ծառի շուրջը,
վորքան տարածվում են նրա հեռավոր ճյուղերը
2—3 մետր լայնությամբ և նույնքան խորու-
թյամբ առու լեն փորում: Այդ առուն 1 մետր
շերտով փտած գոմաղը կամ խառնաղը են լըց-
նում և հողով ծածկում պարարտանյութի այդ
պալարը ծառին բավական է 3—4 տարի: Դրա-
նից հետո մի քիչ հեռու փորում են մի նոր ա-
ռու և ծառը պարարտացնում նույն ձևով: Փտած
գոմաղըի և խառնաղըի փոխարեն պտղատու ծա-
ռերը յերբեմն պարարտացնում են շատ շուր
խառնած աղբահյութով: Շատ շուր խառնած աղ-
բահյութը մինչև գործադրելը պիտի խմորման
յենթարկված լինի: Չխմորվածը կարող է ծառե-
րի արմատներին վնասել: Հեղուկով պարարտաց-
նելիս ծառի շուրջը, բնից մի քիչ հեռու բահով
միջանի նեղ և խոր փոսեր են փորում, վորտեղ
և լցնում են այդ պարարտանյութը: Յերբ հե-
ղուկը ծծվում է հողի մեջ, փոսերը հողով լըց-
նում են:

Ողակավոր և տարագույգ մետաքսագործնե-
րի մասին մենք արդեն խոսեցինք վերևում:

Բացի այդ վնասատուներից, մեր այգիներ-
ում կան բազմաթիվ ուրիշ վնասատուներ, վո-
րոնցից մեր պտղատու ծառերին ամենից շատ
վնաս պատճառում են հետևյալները. պտղակերը,
խնձորենու ցեցը, լվիճը, ծաղկակերը և այլն:

Խնձորենու ծաղկակերը.— Դա փոքրիկ, մուգ
գորշագույն բզեզ է: Ձմեռում է հին կեղևի ճեղ-
քերում, մամուռների մեջ, ծառերի ճյուղերի
վրա, այլ և ծառի մոտ՝ հողի տակը: Դարնանը,
տաք լեղանակներն սկսվելուն պես բարձրանում
է ծառի ճյուղերի վրա իր կնճիթի սուր ծայրով
ծակում է ծաղկաթերթիկն ու նրա մեջ ել ձու
ածում, վորոնցից շուտով դուրս են գալիս փոք-
րիկ վորդեր: Այդ վորդերն ուտում են կոկոննե-
րի միջուկը և դրանով վոչնչացնում նրանց:

Պսղակերը.— Դուրս է գալիս մուգ-դարչնա-
գույն թիթեռի ձվից: Այդ թիթեռի հարսնյակը
ձմեռում է հողի մեջ, իսկ դարնանը, ծառերը
ծաղկելուց հետո, հարսնյակից դուրս է գալիս
թիթեռը և իր ձվերն ածում պտուղների ծայրե-
րին: Այդ ձվերից դուրս են գալիս փոքրիկ վոր-
դեր, վորոնք կրծելով պտղի կեղևը, հասնում են

մինչև սերմերը և վոչնչացնում նրանց: Դրանից հետո թիթեռները պտղի վրա ծակ են քացում և դուրս գալիս: Հարսնյակի վերափոխվելու համար նրանք մտնում են կեղևի ճեղքերի մեջ, մամուռի մեջ կամ իջնում են հողի վրա, թաղվում նրա մեջ, ուր և ձմեռում են:

ԽՆՃՈՐԵՆՈՒ ցեցը.— Չորային տարիներին յերևում է մեծ քանակությամբ: Այդ ցեցի թիթեռը, ամառը հունիս ամսին իր ձվերն ածում է ծառի կեղևի վրա և նրանց ծածկում կաշուն հյուսված: Դրանց պաշտպանությամբ ձվերից դուրս յեկած թիթեռները գարնանը անցնում են ծառի տերևների վրա և ուտում են նրա փափուկ մասերը: Յերբ ցեցի թիթեռները մեծանում են, տասնյակներով հավաքվում են մի տեղ, վոստայն կապում տերևների շուրջը և սկսում նրանց ուտել: Մի տեղ տերևներն ուտելուց հետո նրանք տեղափոխվում են մի ուրիշ տեղ: Այդպիսով նրանք կարող են վոչնչացնել ծառի բոլոր տերևները և ծառը ամբողջովին պատել վոստայնով: Հասունացած թիթեռները հունիսին ծառի ճյուղերի և տերևների վրա հարսնյակ են դառնում, և յուրաքանչյուրն իր համար կոկոններ կազմում: Այդ կոկոնները լինում են ամբողջ խմբերով:

Լվիմ.— Մա շատ փոքր, կանաչ գույնի մի-

ջատ է: Դրանք ամբողջ խմբերով ապրում են ծառի տերևների և ջահել, կանաչ ճյուղերի վրա: Լվիմը շատ արագ է բազմանում, վորովհետև նրանցից ամեն մեկն ամառվա ընթացքում մի քանի սերունդ է տալիս: Աշնան վերջերին լվիմը ծառերի մատղաշ ճյուղերի վրա ձվեր է ածում և այնտեղ ել ձմեռն անցկացնում: Գարնանն ու ամառը նրանք ծծում են մատղաշ ճյուղերի ու տերևների հյութը, վորի հետևանքով ել տերևները կուչ-կուչ են գալիս, իսկ ջահել ճյուղերը դադարում են զարգանալուց: Այդ ֆնասատուից առանձնապես տուժում են ջահել ծառերը և թփուտները:

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ԳԱՐՆԱՆԸ ՊԱՅԳԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պլպելակի, վոսկետուտի, ողակափոր և տարազույզ մետաքսագործի դեմ պայքարելու կանխող միջոցների մասին մենք արդեն հիշեցինք, յերբ խոսում եյինք թրթուռի բները հավաքելու մասին. ծաղկակեր բզեզի վերաբերմամբ նույնպես հիշեցինք, յերբ խոսում եյինք կեղևը մաքրելու, ծառերին կիր քսելու և ծառերի ճյուղերից մամուռը, քոսը մաքրելու մասին:

Այժմ կխոսենք ֆնասատուների դեմ այն ժամանակաշրջանում կռվելու մասին, յերբ նր-

րանք արդեն դարձնել և իրենց փոխարար աշխատանքն են սկսել: Ծաղկակեր բզեզի կողմից ծաղկի կոկոնները ծակելն ու նրանց մեջ ձու դնելն արգելելու համար հետևյալ միջոցին են դիմում: Յերբ կոկոններն սկսում են ուռչել, ծառերը սրսկում են կրակաթով: Կիրը ծածկելով կոկոնները և կեղևի ձևով շրջապատելով դրանց, չի թույլ տալիս, վոր ծաղկակեր բզեզը ծակի կոկոնն ու մանի դրա մեջ: Ծաղկակեր բզեզի դեմ կռվելու լեռկերող միջոցը դա առավոտները ծառերի թափ տալն է: Բզեզները թափվում են ծառի տակ փռած սավանի վրա: Այա հավաքում և վոչնչացնում են դրանց: Այս աշխատանքը պետք է ամեն ուր առավոտյան կրկնել, քանի դեռ կոկոններն ուռչում են, մինչև ծաղկելը: Յեթե չի հաջողվի բոլոր բզեզներին վոչնչացնել և դրանք սկսել են արդեն տերևներն ուտել, այն ժամանակ դրանց հավաքելն արդեն դժվար է: Մնում է միայն ծառը փարիզյան կանաչով սրսկել: Սրսկումը կատարվում է և մինչև ծաղկելը և ծաղկելուց հետո: Իսկ ծաղկելու ժամանակ սրսկել չի կարելի: Թունավոր լուծույթը կարող է փառսել ծաղիկներին և թունավորել մեղուներին:

Փարիզյան կանաչի լուծույթը հետևյալ ձևով են պատրաստում: Մի վեդրո ջրին վերց-

վում է 3 մսխալ փարիզյան կանաչ և 3 — 5 մրսխալ չհանգած կիր: Կշոված կանաչն ու կիրը բաց են անում առանձին-առանձին փորր ամանների մեջ: Ապա կանաչի լուծույթի մեջ մանր աչքեր ունեցող մաղի միջոցով քամում ու լրցնում են կրի լուծույթը: Այնուհետև յերկուսը միասին լցնում պատրաստված մի վեդրո ջրի մեջ և խառնում են:

Պետք է ամբողջ ծառը հավասարաչափ այնպես սրսկել, վոր լուծույթը ցողի պես իջնի տերևների վրա և թույլ չտալ, վոր նա խոշոր կաթիլներ կազմելով գետին թափվի: Սրսկումը լավ կլինի, յեթե չոր և հանդարտ յեղանակին կատարվի, այդ դեպքում լուծույթը յերկար ժամանակ մնում է տերևների վրա: Թրթուռն ուտելով փարիզյան կանաչով ծածկված տերևները, թունավորվում և կոտորվում է:

Մինչև պտղատու այգու ծաղկելը փարիզյան կանաչի սրսկում է կատարվում հետևյալ փոխադրությունների թրթուռների դեմ. պլպելակի, վոսկետուտի, ողակավոր և տարազույգ մետաքսագործների և ցեցի: Պտղակերի թրթուռների դեմ սրսկումը կատարվում է այն ժամանակ, յերբ պտուղները նոր են սկսում մայա բռնել: Վորովհետև պտղակերի թրթուռները ցեբեկը չեն թռչում, դրա համար էլ, վորպեսզի իմացվի, թե

այդուս այդ թիթեռները կան թե վոչ. պիտի գիշերը լապտեր վառել: Յեթե լապտերի շուրջը հալածվեն բազմաթիվ մութ-դարչնագույն թիթեռներ, դրանք հենց պողակներն են:

Լվիճը վոչնչացնելու ամենահասարակ միջոցը ծխախոտի շուրն է: Այս հեղուկը պատրաստելու համար վերցվում է 100 գրամ ծխախոտի տերե, 50 գրամ կանաչ սապոն և մեկ բաժակ սովորական մոխիր: Այս բոլորի վրա շուր լցնելով յեռացնում են, ապա թողնում են, վոր սառնի: Սառելուց հետո քամում և վրան ախքան շուր են լցնում, վոր ամբողջ հեղուկը մի դուլլ դառնա: Այս հեղուկն սպանիչ ազդեցություն է ունենում լվիճի վրա:

ԲՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԱԶԻՏՆԵՐԸ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծառերի ճյուղերի վրայի մամուռների և փոսերի մասին մենք արդեն խոսել ենք: Բուսական այս պարազիտներից զատ կան բազմաթիվ այլ սնկային պարազիտներ, վորոնցից հիշենք հետևյալները՝ քոսը — վորը մութ-դարչնագույն է և վնասում է տերևներն ու պտուղները, տերևների ժանգը, — վորից տերևներն ու ժասպառվում և վաղաժամ թափվում են, ալրա-

ցողը, — վորը վնասում է մատաղ տունկերի տերևներին, պտուղներին և շիվերին:

Մնկային այս բոլոր պարազիտները խանգարում են տերևների, պտուղների և շիվերի կանոնավոր դարգացման և ծառի վրա վնասակար ազդեցություն են ունենում: Յեթե դրանց դեմ պայքար չմղվի, ծառը շուտ կչորանա: Դրանց դեմ կռվելու գլխավոր միջոցը ծառերը բորբոյան հեղուկով սրսկելն է: Դա պատրաստվում է հետևյալ ձևով. վերցվում է մեկ կիլո 200 գրամ չհանգած կիր և նուրբան պղնձե արջասպ 10 դուլլ ջրին: Կիրը հանգցնում են քիչ ջրի մեջ, վորից հետո խառնում են մի վոչ մեծ ամանի մեջ: Մի ուրիշ ամանում, փայտե կամ կավե, բայց վոչ մետաղե, բաց են անում պղնձե արջասպը: Բերանը բաց տակառի մեջ լցնում են շուրը, վորի մեջ առաջ ածում են պղնձե արջասպի լուծույթը: Ապա շուրը մի կողմից փայտով խառնում, իսկ մյուս կողմից կրաշուրն են լցնում: Ստացված հեղուկը պիտի ամպագույն լինի: Բորբոյան հեղուկով ևս սրսկումը կատարում են այգին ծաղկելուց առաջ և հետո:

ԱՅԳՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՆԱՆ ՑՐՏԱՀԱՐՈՒ- ՅՅՈՒՆԻՑ

Գարնանային գիշերվա ցրտերը, վոր զուգադիպում են այգու ծաղկման ժամանակնե-

բին, հաճախ իդերև են հանում այգեգործի ամբողջ աշխատանքն ու հողսը: Ճիշտ է, դա տարերային յերևույթ է և մարդը չի կարող դրա առաջն առնել, բայց դրա ազդեցութիւնը պետական ծառերի վրա փորոշ չափով կարելի յեմեղմացնել:

Պտղատու ծառերի ծաղիկները ցրտահարութիւններէց պաշտպանելու համար այգու շուրջը վաղորոք տերեւների, խոփի, դարմանի, փշինի և այլ աշխարհի նյութերի կուտներ են դրնում, փորոնք այրվելիս շատ ծուխ և քիչ բոց են տալիս: Գարնանը դիշերային ցրտահարութիւնները պատահում են պարզ ցուրտ որերին, յերբ յերեկոները հանդարտում է քամին և յերկինքը պարզում է: Յեթե այդ որերին այգին ծաղկում է, պետք է յերեկոյան ուշադրությամբ հետևել ջերմության իջնելուն և հարկ յեղած դեպքում կրակ տալ կուտներին: Ծուխը պատում է ծառերին և դրանով հենց ծաղիկները պաշտպանվում են ցրտահարութիւնից: Այդպիսի վիճակում այգին պահվում է մինչև առավոտ, յերբ արևն սկսում է տաքացնել գետինը: Այգու աշխարհի կուտներն են վառվում, փորտեղից թեթև քամի յեմիչում:

ԱՅԳՈՒ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԲՆԵՐԸ

Վերևում մենք կարճ խոսեցինք պտղատու այգու գարնանային գլխավոր աշխատանքների մասին: Այդ բոլոր աշխատանքները շտապ բնույթ են կրում: Յերբեմն մի քանի տեսակի աշխատանք գարնանը միաժամանակ պիտի արվի: Այլ բնույթ են կրում ամառային աշխատանքները՝ դրանք արդեն այդքան շտապ չեն և աստիճանաբար են կատարվում:

Յեթե վնասատուների դեմ գարնանը մղած պայքարը, լավ արդիւնքներ չի տվել և դրանք սկսել են արագությամբ բազմանալ (հատկապես պտղակներները), այդ դեպքում պետք է մի անգամ ել փարիզյան կանաչով սրսկել: Սակայն այդ սրսկումը պիտի կատարել պտուղները հավաքելուց մի ամիս առաջ, փորպեսզի քաղելու ժամանակ դրանք մաքրված լինեն թռչնավոր կանաչից:

Յերբ այգին առատ բերք ունի և հողի տված անունը անբավարար է, պտուղներն սկսում են չհասած թափվել: Այդ դեպքում պտղատու այգին պետք է պարարտացնել աղբահյութով, յուրաքանչյուր ծառի շուրջը 3—4 գույլ ամելով: Զոր յեղանակին անհրաժեշտ է

հատկապես ծառերի բների շուրջը ջրեր, վոր ար-
ժատները լավ թրջվեն:

Առատ բերքի ժամանակ ծառերի ճյուղերը
իվիճակի չեն լինում իրենց վրա պահել պտուղ-
ների ծանրութունը: Իրա համար ել պիտի
իր ժամանակ խշմարներ դնել: Իսկ ափսոսեղ ուր
խշմարներ չի կարելի դնել, բարակ ճյուղերը
պիտի կապել հաստ ու վստահելի ճյուղերին:

Այդու բոլոր մուլախոտերը հանում և խառ-
նաղբի կույտեր են կաղմում ու հողով ծածկում:
Այդ կույտերի վրա կեղտաջուր և աղբաջուր
են լցնում՝ փթումն արագացնելու համար:

Յեթե այդու հողը վատ ե պահվում, աֆն
ժամանակ ամառը մեկ-յերկու անգամ պիտի
ցաքանել: Թափված պտուղները, առանձնապես
պտղակելի կողմից ֆնասվածները, պիտի հավաք-
վեն և հեռացվեն այգուց:

Յերևացող ցուլկները պետք ե տակից
կտրել սուր դանակով, վոր դրանք իդուր տեղը
ծառից սննդանյութեր չխլեն:

Պատահում ե, վոր ծառը ուժեղ կերպով
աճում, հոռանում ե, բայց միջանի տարի իրար
յեանից պտուղ չի տալիս: Այդպիսի դեպքերում
արհեստական կերպով պետք ե ծառի աճումը
կանգնեցնել և ստիպել, վոր նա պտղակոններ
տա: Դա կարելի լե անել արմատները կտրա-

տելով, ծառի շուրջը առու լե փորվում 60 սան-
տիմ: Խորությամբ, ինչպես այդ արվում ե ծե-
րացած ծառերը պարտադրանքով համար, վորի
մասին վերևում խոսեցինք: Այդ բոլոր յերևա-
ցող արմատները կտրվում են դանակով կամ
մկրատով և այնուհետև առուն լցվում ե հողով:
Այդպիսի գործողությունից հետո ծառը դան-
դաղեցնում ե իր աճումը և առատ պտղակոն-
ներ ե տալիս յեկող տարվա համար:

ՊՆՈՒՂՆԵՐԻ ՀԱՎԱՔԵԼԸ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼԸ

Պտուղները հավաքվում են հասնելիս: Վո-
րոշ տեսակներ հանում են արդեն հուլիսի վեր-
ջին կամ ոգոստոսի սկզբին, մյուսները ավելի
ուշ: Իսկ ձմեռային տեսակները հաճախ ճյուղե-
րի վրա լեն մնում մինչև ուշ աշուն: Խնձորի
և տանձի հասնելը վորոշվում ե կորիզի գույնով
յեթե կորիզները դարչնագույն են դարձել, պը-
տուղը հասած ե համարվում: Հասած պտուղները
հեշտությամբ են ընկնում ծառից, իսկ քաղելու
ժամանակ առանց առանձին գժվարության
պոկվում են ճյուղից:

Պտուղները պետք ե զգուշությամբ և ու-
շադրությամբ քաղել, ծառերը չֆնասել և մրդե-
րը չճլխել: Պտղաքաղի ժամանակ պետք ե ծա-
լովի ունդուխք գործածել: Պետք ե վերջ տալ

ծառերի վրա բարձրանալուն՝ հատկապես կոշիկով:

Հավաքված պտուղները յերեք տեսակի յեն բաժանվում: Առաջին տեսակը կազմում է ամենալավ, առանց վորևե մնասվածքի, լավ գույնի և ձևի մրգերը: Յերկրորդ տեսակը կազմում են նույնպես առանց մնասվածքի, բայց վոչ առաջինի պես լավ պտուղները: Իսկ յերրորդ տեսակը կազմում են մնասված, մանր պտուղները: Հոտած պտուղները պետք է հեռացնել այգուց, վորովհետև դրանցից վարակվում ու հոտում են մյուս առողջներն ել:

Այդպես տեսակավորելիս պտուղների ամենամեծ մասը յերկրորդ տեսակի, իսկ քիչ մասը առաջին և յերրորդ տեսակի կլինի: Փոխադրության համար նշանակված պտուղները դարսվում են արկղների մեջ: Դարսված շաքերի միջև ամեն անգամ փայտի թեփ են լցնում: Արկղերը պիտի լիբը լցնել, վոր արկղի մեջ պտուղները չշարժվեն ու չմնասվեն փոխադրության ժամանակ:

Ձմեռը պահելու համար նշանակված պտուղները պետք է չոր յեղանակին քաղել, ապա վոչ հաստ շերտով դարսել ծղոտի վրա չարդախի տակ կամ վոչ բնակելի սենյակում՝ լուսամուտները բաց թողնելով: Պտուղների ջուրը

դուրը յիանալուց հետո, դրանց մառան են փոխադրում: Մառանը պիտի չոր լինի և ոչափոխության խողովակ ունենա: Պտուղները դարսվում են դարակների վրա, լավ է, մի շաք: Յերբ այլևս պտուղներից ջուր չի դուրը յիանում, մառանի լուսամուտները բռնվում են, վոր լույս, տաքություն և խոնավություն ներս չթափանցի: Ժամանակ առ ժամանակ պետք է նայել պտուղները և հոտածներն անմիջապես հեռացնել:

ԱՅԳՈՒ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Պողաքաղը վերջացնելուց հետո գյուղացին աշնանն ել չպիտի աչքաթող անի իր այգին: Աշնանն ել քիչ աշխատանք չկա, վոր պիտի կատարվի մինչև ձմեռը: Ամենից առաջ պետք է բոլոր խշմարները (հավաքել ու պահել ծածկի տակ, վորպեսզի անձրևից ու ձյունից դրանք չփչանան: Յեթե այգում պտղակեր և ծաղկակեր բզեզ շատ է յեղել, ապա անկասկած դրանք չմեռնելու համար ապաստանած կլինեն նաև խշմարների ճեղքերի մեջ: Նրանց վոչնչացնելու համար բոլոր խշմարները պիտի բուցի վրա խանձել և ապա միայն դարսել ծածկի տակ:

Այն այգիներում, ուր հողաչափ կա, անհրաժեշտ է աշնանը դրա գեմ վճռակա՞ն կռիվ մղել:

Դրա համար սեպտեմբերին ծառերին հազցնում են այսպես ասած մածիկ քսած ողեր: Գետնից մոտ 75 սանտիմ վերև ծառի բնին յերկու տեղից թղթե ող են կապում: Այդ թղթե ողերին կպչուն մածիկ են քսում: Մածիկը պատրաստվում է զանազան ձևերով: Ամենահասարակ ձևն հետևյալն է: վերցնում են յերկու մաս անիվի յուղ և մի մաս նավթե ձյուլի և այդ խառնուրդի մի փթին ավելացնում են մեկ ֆունտ կալիֆոր: Մածիկ քսած ողերի վրայով հողաշափը չի կարողանում բարձրանալ և կպչում է նրան:

Ծառերի բների ճաքճքած կեղևի մեջ ձմռանը շատ վնասատուներ են պաշտպանվում: Պետք է բնի կեղևը մաքրել և բներին կիր քսել: Այդ աշխատանքը կատարվում է ուշ աշնանը նույն ձևով՝ ինչ գարնանը, վորի մասին մենք արդեն խոսել ենք վերևում:

Աշնանն է կատարվում նաև ծառերի ետը և այդու վարը կամ փորը: Վերջինս շատ անհրաժեշտ է և լավ կլինի յեթե դա ուշ աշնանը կատարվի, փխրած հողի մեջ շատ վնասատու միջատներ են վուչնչանում, և հողը լավ սառչում ու խոնավություն է ծծում:

Զմեռը այգեգործ-գյուղացու հանգստի ժամանակն է: Սակայն այդ ժամանակ ել նա պիտի ուշադրություն դարձնի իր այգու վրա: Այգու մատաղ ծառերը ձմռան սկզբին պետք է փաթաթել յեղևեղև ձյուղերով կամ յեղևգով, վոր դրանց բները նապաստակներն ու մկները չկրճեն: Յերբ շատ ձյուն է գալիս, պետք է ծառերի ձյուղերի վրայից ձյունը թափ տալ, հակառակ դեպքում ծառի ձյուղերը ձյունի ծանրության տակ կարող են ջարդվել: Ազատ ժամանակ պետք է թրթուռի բները հավաքել:

Յեթե ձմեռը սակավաձյուն է, պիտի ձյունը թիակել դեպի ծառերի բները, տափտափել, վոր գարնանը ուշ հալչի: Դա չի թողնում, վոր ծառերը շուտ գարթնեն, շուտ ծաղկեն ուրեմն և ցրտահարվեն:

Բացի բուն այգու աշխատանքից, առանձնապես կուտնտեսությունը պիտի ձմռանը հող տանի այգեգործական գործիքներ, վնասատուների դեմ կռվելու նյութեր այլև ցանկապատը նորոգելու նյութեր ձեռք բերելու մասին: Դրա համար պիտի շրջանային գյուղատնտեսի ոգնությամբ եախահաշիվ կազմի, և շրջկոոպի կամ կուտնտնության միջոցով ձեռք բերի վերահիշ-

յալ գործիքներն ու նյութերը: Յեթե զրանք
ձմեռն ստացվին ու տեղ հասցվեն, այն ժամա-
նակ գարնանը բոլոր աշխատանքները հաջող
կընթանան:

Միայն այն դեպքում, յեթե այգու բոլոր
վերևում հիշված աշխատանքները կատարվեն,
կարելի չե այգուց լավ բերք, ուրեմն և մեծ
յեկամուտ ստանալու հույս ունենալ:

ԱՅԳՈՒ ԽՆԱՄՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Այգի տնկելիս տնկարաններից լավ տե-
սակի պատվաստված տունկեր ձեռք բեր:
2. Ծառ տնկելու համար լայն ու խորը փո-
սեր փորիր, վոր արմատների տակը և շուրջը
հողը փուխը լինի:
3. Ծառերը սաղը տնկիր, խոր տնկելը ֆուս
և ծառին:
4. Ծառերը խիտ մի տնկիր, վորովհետև
խիտ տնկված ծառերը խանգարում են իրար և
լավ պտուղ չեն տալիս:
5. Մատաղ ծառերը պաշտպանիր նապաս-
տակներից և մկներից, մատաղ այգու այդ ֆուս-
սակար թշնամիներից:
6. Ամեն տարի կտրիր, հեռացրու չոր ճյուղ-
քերը, հոռաշիվերը և ավելորդ ճյուղերը, վոր

ծառի սաղարթը չստվերակալի, չթուլանա: Զոր
ճյուղերն ու հոռաշիվերը կանոնավոր և գլուշ
կտրիր:

7. Այգու հողը փուխը վիճակում պահիր,
ամեն տարի այգին ամբողջովին վարիր կամ փո-
րիր, կամ ել ծառերի բների շուրջը միայն
փխրացրու:

8. Մատաղ այգում կարտոֆիլ և արմա-
տապտուղներ շատ մշակիր, բայց հացաբույսե-
րից (գարի, ցորեն) խուսափիր. դրանք պնդաց-
նում և ուժասպառում են հողը:

9. Հասակն առած այգիները, ուր չի կա-
կարելի կամ ձեռնտու չի այլ բույսեր ցանել.
վար պահիր և ամառը մի քանի անգամ ցա-
քանիր:

10. Յերբ նկատում ես, վոր ծառերը թույլ
են աճում, պարարտացրու այգին, բայց իմացիր
թե ինչպես պիտի պարարտացնես:

11. Ծառերի հին կեղևները մաքրիր, իսկ
բներին կիր քսիր. դա ծառին կպաշտպա ի վա-
ղաժամ ծերությունից և վորոշ չափով նաև
ֆուսաստուներից:

12. Ուշադրությամբ հետևիր այգու ֆուս-
սատուներին և նրանց դեմ մշտական ու ամեն
կերպ պայքար մղիր — դրանք հաճախ վնասա-
նում են այգու ամբողջ բերքը:

13. Ծառերը թունավոր լուծույթներով

սրահներին, իմացիր դեղերը պատրաստելու ձևը և ձեռք առ բոլոր նախազգուշացումները:

14. Պատուհները բոլորը միասին մի հաշվառման, այլ միայն հասունացածները, պատուհները բաղելիս զգուշ յեղիր, վոր վնչ պատուղը և վնչ ել ճյուղը չմնասես:

15. Հոտած պատուհները առողջների հետ մի պահիր, դրանցից ոգուտ չկա:

16. Այգուտ վորդնած խնձորներ մի պահիր, անմիջապես հեռացրու դրանց:

17. Տարվա բոլոր յեղանակներին ել այգին աչքաթող մի արա, տարվա ամեն մի յեղանակին այգուտ վորոշ աշխատանք կա:

18. Այգուտ բոլոր աշխատանքները կատարիր իր ժամանակին և ճշտապահ:

19. Ցանկապատը միշտ սարք վիճակում պահիր, վոր կենդանիներն այգի չմտնեն:

20. Այգեգործական բոլոր խնդիրների վերաբերմամբ սերտ կապ պահպանիր շրջանային ագրոնոմի հետ:

ՊՏՂԱԲՈՒԾՈՒՅԱՆ ԱԳՐՈՍԻՆԻՍՈՒՄԸ

ա. Հողային հասարակությունների համար

1. Աշնանային և գարնանային միջշարքային մշակում՝ բների շուրջը փորելով:

2. Գոմաղբով պարարտացում:

3. Հողի փխրացում ամառվա ընթացքում վնչ պակաս քան յերկու անգամ:

4. Պտղատու ծառերն աշնանն ու գարնանն ետել, չոր, հիվանդ, թույլ ճյուղերը կտրել, ալլ և նոսրացնել խտացած սաղարթները:

5. Ուշ աշնանը ծառերի բները և հասա ճյուղերի հիմքերը քոսերից և կեղևի մեռած մասերից մաքրել և կիր քսել:

6. Պայքարել միասատուների դեմ մեխանիկական միջոցներով՝ մածիկ ողեր հազցնել, ծառերը թափ տալ ծաղկակերբզեզից, ձմեռը չթափված պատուհները վոնչացնել, ծառերը միջատների բներից մաքրել, ծառերի տակ թափված պտուղները հավաքել ու այգուց հեռացնել:

7. Պտղակալած ծառերի տակ բավականաչափ խշմարներ տալ:

8. Կոլեկտիվ նոր այգիներ դցել, իսկ հներն ընդարձակել:

բ. Կոնսուլացիայի և հասարակությունների համար

Այն բոլորն, ինչ ասվեց հողային հասարակության վերաբերմամբ և բացի այդ. —

1. Ծառերը գարնանը մինչև բողբոջների բացվելը յերկաթե արջասպ՝ կրի հետ, կամ ձծմրա-կրային խառնուրդ սրակել: Այլ կամառվա ընթացքում դեղորայք սրակել ծառերին տեղական ագրոպերսոնալի ցուցմունքով:

2. Այն շրջաններում, ուր հողաչափ միջատը շատ և տարածված, այգիներին ծխախոտի ծուխով քսել:

3. Մատաղ այգիների միջարքային տարածում:

ծախսերը ոգտագործել բանջարանոցային կուլ-
տուրաներ և թփապտուղներ տնկելով:

4. Անխնամ թողնված ծառաստանները նոս-
րացնել և ծառերին իրարից նորմալ հեռավորու-
թյուն տալ:

5. Պտղատու ցանցառ ծառաստանների բաց
տեղերը արդյունաբերական տեսակի ծառեր
տնկել:

գ. Կոյնեցեստուրյունների համար

Այն բոլորն ինչ ասվեց հողային հասարա-
կությունների և կոնտրակտացված տնտեսու-
թյունների համար և բացի այդ. -

1. Փոխանակ վար պահելու, այգուում գլխա-
վորապես թիթեռնածաղիկ բույսեր ցանել կա-
նաչ պարարտացման համար:

2. Արժեքավոր պտղատու ծառերը յերի-
տասարդացել և աստիճանաբար (2—3 տարում)
վոչ արժեքավոր տեսակները պատվաստելով ար-
ժեքավոր-արդյունաբերական տեսակներ դարձնել:

3. Լյգեզործական կուլտուրաների փնտա-
տունների և հիվանդութունների դեմ քիմիական
և այլ միջոցներով կռվել:

4. Պտուղի նոր մառաններ կառուցել և հները
նորոգել:

5. Կողմնակի վնասում այգին ընդարձակել:

Ագրոմիսիոնային ագրոնոմիայից այն հա-
սարակ մեղմարկումների ամբողջությամբ և
վար պիտի պարտադիր կերպով կատարվի:



ՀԱՎԵԼՎԱԾ

ՇԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՄԱՆ ՑԱՆԿԱԼԻ ՏՈԿՈՍԸ

ա. Հարավայրերի համար

- | | |
|-------------------------------------|------------------------------|
| 1. Դեղձ 50 % | 3. ծիրան 30 % |
| 2. տանձ 5 % | 4. կեռաս և պալ 5 % |
| 5. դամբուլ-սալոր 5 % | |
| 6. սերկևիլ 3 % | |
| 7. Ալբ 2 % ընդամենը 100 % | |

բ. Նախալեռնային ցրտահեռների համար

- | | |
|-------------------------|-----------------------------|
| 1. Դեղձ 5 % | 5. սալոր-դամբ 5 % |
| 2. ծիրան 35 % | 6. կեռաս 5 % |
| 3. տանձ 5 % | 7. պալ 5 % |
| 4. խնձոր 30 % | 8. այլ 10 % |
| ընդամենը 100 % | |

գ. Լեռնային ցրտահեռների համար

- | | |
|-------------------------|--------------------------------|
| 1. Խնձոր 70 % | 3. պալ 15 % |
| 2. տանձ 10 % | 4. Դամբուլ-սալոր 5 % |
| ընդամենը 100 % | |

**ՓՈՓՈԽԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՄԱՆ ՑԱՆԿԱԼԻ
ՏՈԿՈՍԸ**

ա. Հարթվայրերի համար

Դեղձ. 1. Նարինջի . . .	25 0/0	
2. Ձափարան . . .	25 0/0	
3. Չխուրի . . .	20 0/0	
4. Ելբերտի . . .	20 0/0	
5. Նազլու . . .	5 0/0	
6. Ջանաղ., սեղանի 5 0/0		(Սպիտակ, Ամսդեն,
100 0/0		Կուլմբերլանդ, Ալեք-
		ստենդը, Ռոյի, Ռիվեր-
		ստ, Մադամ-Պենարդ)

Ծխում. 1. Շալախ . . .	50 0/0	
2. Խոսրովչահ . . .	15 0/0	
3. Սպիտակ . . .	15 0/0	
4. Թարարգա . . .	5 0/0	
5. Աբութալիբի . . .	5 0/0	
6. Գյոզջանարաղ . . .	5 0/0	
7. Ջանաղան . . .	5 0/0	
	100 0/0	

Կամ. 1. Կանաչ Ռեկլոդ . . .	65 0/0	
Բուլ. 2. Ալբուխարի . . .	20 0/0	
Խալս. 3. Միրարալի . . .	10 0/0	
4. Ջանաղան . . .	5 0/0	
	100 0/0	

Տոնձ. 1. Մալուշ . . .	20 0/0	
2. Վիլյամ . . .	35 0/0	

3. Բ'րս Դարդինյուն . . .	15 0/0	
4. Սենթերմեն . . .	15 0/0	
5. Բերս-ժիֆոր . . .	5 0/0	
6. Սենթերմեն(ամ.) 10 0/0		
	100 0/0	

Վեռա 1. Դրոզանա-դեղին 50 0/0		
2. Դենիսենկո . . .	20 0/0	
3. Նապալեոն վարդագույն 10 0/0		
4. Ջանաղան . . .	20 0/0	(Ռան Մարկո, 30 0/0 Կար-
	100 0/0	միբ թշիկներ 30 0/0, Ել-
		տոն 20 0/0, Ցեղան սիրտ՝
		30 0/0, Գրոնուար՝ 30 0/0,
		Փրանց-Հովսեփ՝ 30 0/0,
		ժարուլե—3 0/0):

Պալ. 1. Լյուբսկոյա . . .	30 0/0	
2. Մենիստ Պողբելսկի 30 0/0		
3. Անգլ վաղահաս . . .	20 0/0	
4. Ջանաղան . . .	20 0/0	
	100 0/0	

Սեր. 1. Բաղդր . . .	80 0/0	
Կեվիլ. 2. Թթվաշ . . .	20 0/0	
	100 0/0	

Սյլի. 1. Թութ . . .	40 0/0	
2. ալոդին . . .	60 0/0	
	100 0/0	

բ. Նախալեռնային օրշաճների համար

Դեղձ. — Հարթվայրի համար նախատեսված ուղի
վաղահաս տեսակները:

Յիրամի. Հարթավայրի տեսակները:

- Տաճ. 1. Սենժերմեն . . . 30⁰/₀
 2. Կյուրի . . . 20⁰/₀
 3. Բերգ Գարդինադոն . 30⁰/₀
 4. Բերբոսկ . . . 10⁰/₀
 5. Մալաչ . . . 5⁰/₀
 6. Վիլլամա . . . 5⁰/₀

100⁰/₀

- Խնձոր. 1. Շամպան. ունիտ 10⁰/₀
 2. Որչևանի ունիտ 25⁰/₀
 3. Պեպիկ Լոնդոնի 25⁰/₀
 4. Սիմիբենկո . . . 25⁰/₀
 5. Պապերեկո . . . 4⁰/₀
 6. Գլազորեկա . . . 4⁰/₀
 7. տեղ. ամառ. փոփոխակ. 2⁰/₀
 8. Պարմեն ձմեռ. վոսկեզույն 4⁰/₀
 9. Ռայկա . . . 1⁰/₀

100⁰/₀

Մալար դամբուլ.—Հարթավայրի տեսակները:

Կեռաս.—Հարթավայրի տեսակները:

Պալ.—Հարթավայրի տեսակները:

գ. Լեռնային շրջանի համար:

- Խնձոր. 1. Անտոնովկա . . . 30⁰/₀
 2. Լանսերդ . . . 30⁰/₀
 3. Գլազորեկա . . . 20⁰/₀
 4. Պապերեկա . . . 20⁰/₀

100⁰/₀

- Տաճ. 1. Իլինկա . . . 25⁰/₀
 2. Անտառային զեղեղունի 25⁰/₀
 3. Ալեքսանդրյան 25⁰/₀
 4. Պանշա . . . 25⁰/₀

100⁰/₀



15332